

ԿԱՆՈՆ ԴՐՈՇՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Կ'օրնենք մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր երկնաւոր, սրբաբանոյ՛ անունը: Թող գա՛յ արքայութիւնը: Թող կատարուի՛ քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ Չարէն ազատէ՛: Որովհետեւ քո՛ւկդ եմ միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն:

ՀՈԳԵԳԱՍՍԵԿԱՆ ՇԱՐԱԿԱՆ ԳՉ

Որ Համարաց եւ Հօր եւ Որդւոյ, անճառաբար բըղխամն ի միշտ Է-էն, այսօ՛ր բըղխեցիր ջուր կենդանի խորասողէմ: Հօրի՛ Աստուծոյ սը՛րբեան՛:

Դուն, որ համազոյ եւ Հօրը եւ Որդիին, անպարմելի կերպով քիսած մշտական Էութենէն [Հօր Աստուծոյ], այսօր կենդանի ջուր քիտցիր Երուսաղէմի մէջ, ո՛վ Աստուծոյ Հոգի, ողորմէ՛ մեզի:

Որ արարչակից եւ Հօր եւ Որդւոյ, որով կենդանաճնեալք ի ջո՛ւրս արարածք. այսօ՛ր Որդիս Աստուծոյ ծանփա ի ջուրց. Հօրի՛ Աստուծոյ սը՛րբեան՛:

Դուն, որ արարչակիցն եւ Հօրը եւ Որդիին, եւ քեզմով էր որ արարածները կեանք առին ջուրերուն մէջ, այսօր Աստուծոյ որդիներ կը ծնանիս [Մկրտութեան] ջուրերէն. ո՛վ Աստուծոյ Հոգի, ողորմէ՛ մեզի:

ԱՂՕԹՔ

Քրիստոս Աստուած, քու արարածներդ լուսաւորեցիր՝ աստուածգիտութեան լոյսը մեր մէջ ծագելով, եւ հիմա քու այս ծառադ ազատեցիր, սրբեցիր եւ արդարացուցիր, եւ որդեգրութեան պատիւը տուիր իրեն:

Ով Տէր, ամենակալ Աստուած, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, քու ճշմարտութեանդ գիտութիւնը շնորհեցիր բոլոր հաւատացողներուն, եւ իշխանութիւն տուիր ջուրէն եւ Հոգիէն վերստին ծնելով Աստուծոյ որդիները ըլլալու: Դուն, որ սուրբ Աւագանին շնորհած քաւութեամբ նորոգեցիր [այսինչ անուն] ծառադ, սրբէ՛ գայն քու ճշմարտութեամբդ եւ Սուրբ Հոգիիդ շնորհքի լոյսով, որպէսզի աստուածութեանդ տաճար եւ բնակարան ըլլայ, կարենայ արդարութեան ճամբաներէն քալել եւ համարձակութեամբ կանգնիլ քու միածնիդ՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ահաւոր ատեանին առջեւ:

Քահանան սուրբ Միւռնէն կ'առնէ իր ափին մէջ եւ կը սկսի կնքել, ըսելով.

ՃԱԿԱՏԸ՛ Այս անոյշ իւղը, որ Յիսուս Քրիստոսի անունով քու ճակատիդ կը դրոշմուի, երկնաւոր աննիւթական պարգեւներուն կնիքը թող ըլլայ:

ԱՉՔԵՐԸ՛ Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անունով թող լուսաւորէ աչքերդ, որպէսզի երբեք մահ չտեսնես:

ԱԿԱՆՁՆԵՐԸ՛ Այս սուրբ օծումը թող բանայ ականջներդ, որպէսզի Աստուծոյ պատուէրները լսես:

ՔԻԹԸ՛ Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անունով թող յաւիտենական կեանքի անոյշ բոյրը տայ ռունգերուդ:

ԲԵՐԱՆԸ՛ Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անունով բերնիդ եւ շրթներուդ վրայ դրուած ամուր դուռ եւ պահապան թող ըլլայ:

ՉԵՌՔԵՐԸ՛ Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անունով թող պատճառ ըլլայ բարեգործութեան, ամէն տեսակի առաքինի գործերու եւ առաքինի կեանքի:

ՍԻՐՏԸԴ Այս աստուածային կնիքը թող մաքրե սիրտդ եւ ուղիղ հոգի դնէ քու ներսիդիդ:
ԿՈՆԱԿԸԴ Այս կնիքը Յիսուս Քրիստոսի անունով թող քեզի ամուր վահան ըլլայ, որով
«կարենաս մարել Չարին արձակած բոլոր միացող նետերը»:
ՈՏԸԵՐԸԴ Աստուածային այս կնիքը դէպի յաւիտենական կեանք թող ուղղէ քայլերդ,
որպէսզի երբեք չսասանիս:

Ապա կ'ըսէ.

Խաղաղութի՛ւն քեզի, ո՛վ Աստուծմէ փրկուած: Խաղաղութի՛ւն քեզի, ո՛վ Աստուծմէ
օծուած:

Կնքահայրը կը պատասխանէ.

Խաղաղութի՛ւն նաեւ քու հոգիիդ:

Ապա երախային ճերմակ նոր հագուստ մը հագցընեն: Քահանան Նարօտը կը կապէ անոր գլխուն եւ երկու
վառած մոմ կու տայ երկու երեխաներու ձեռքը, մինչ հետեւեալ Շարականը կ'երգուի.

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ ԲՁ.

**Աստուած խօսեցաւ ի բարձանց, լուսարօք
բընակիչք երկրի, որ եկն եւ փրկեաց
զս' մենայն արարածս, զի՛ զանուն Տեան
կարդասցուք, եւ սուք յ' ընտրեալն ի
բարձն' մա:**

**Նոր Իսրայէլ կոչեցաք ի Քրիստոս, եզս'ք
բաժին Տեան եւ ժառանգակից
Քրիստոսի. զի՛ զանուն Տեան
կարդասցուք եւ սուք յ' ընտրեալն ի
բարձն' մա:**

**Ի վիմէն կենդանութեան ճաշակեցար զի
քաղցր է Տէ՛ր, եւ յիսլ սրբութեան՝ն օծար
հաւատառի զի՛ զանուն Տեան կարդասցուք,
եւ սուք յ' ընտրեալն ի բարձն' մա:**

**Ի քեզ եմք սպասինեալ որ մայրդ եւ
ս' զախին Քրիստոսի. լեր բարեխօս վանն
մեր. զի՛ զանուն Տեան կարդասցուք, եւ
սուք յ' ընտրեալն ի բարձն' մա:**

Բարչունքներէն Աստուած խօսեցաւ,
լսեցէք, ո՛վ երկրի բնակիչներ. անկիւս
եկաւ եւ փրկեց բոլոր արարածներս,
որպէսզի Տիրոջ անունին սպասինիկք եւ
օրհնենք զայն բարչունքներուն մէջ:

Քրիստոսի միանալով՝ Նոր Իսրայէլ
կոչուեցանք. Տիրոջ ժառանգութիւնը
եղանք եւ Քրիստոսի ժառանգակից
դարչանք, որպէսզի Տիրոջ անունին
սպասինիկք եւ օրհնենք զայն
բարչունքներուն մէջ:

Կեանքի Սեղանէն ճաշակեցիկք,
որովհետեւ Տէրը քաղցր է, եւ հաւատալով՝
սուրբ իւղով օծուեցանք, որպէսզի Տիրոջ
սպասինիկք եւ օրհնենք զայն
բարչունքներուն մէջ:

Քեզի սպասինած ենք, ո՛վ Քրիստոսի մայր
եւ աղախին, բարեխօս եղիր մեզի համար,
որպէսզի Տիրոջ սպասինիկք եւ մեծարենք
ու պարունենք քեզ:

ԱՂՕԹՔ

Օրհնեալ ես, բարեխնամող Աստուած, որ քու ծառայիդ փրկութեան հագուստ եւ ուրախութեան պատմունճան հագցուցիր, փրկութեան սաղաւարտ եւ շնորհքի թագ դրիր անոր գլխուն, եւ մեր թշնամիին դէմ պայքարելու անխորտակելի զէնք տուիր: Ուստի որպէս շնորհակալութիւն՝ կը փառաւորենք քեզ, Որդիին եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից:

Խաղաղութիւն բոլորին:

Ո՛վ Տէր, ամենակալ Աստուած, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, այստեղ ներկայ հաւատացեալները քեզի՛ կը խոնարեցնեն իրենց գլուխները: Աներեւոյթ աջդ երկարէ եւ օրհնէ՛ զանոնք, եւ իրենց աշխատանքները յաջողէ՛. իսկ անոնք որոնք կուսական կեանքի մէջ են, ամբասպնէ՛ իրենց ընթացքին մէջ՝ ժուժկալութիւն եւ կատարեալ աստուածապաշտութիւն տալով, եւ խաղաղութեան մէջ պահէ զիրենք: Այս մանուկը սնուցանէ եւ հասուն տարիքի հասցուր, իսկ միւս բոլոր հաւատացեալներուդ դուն ի՛նքդ պարիսպ եղիր ու պաշտպանէ զիրենք իրենց տուներուն մէջ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միացած ըլլալու ուրախութիւնն ու ցնծութիւնը տալով անոնց: Եւ Քրիստոսի հետ քեզի՛ Հօրդ եւ Սուրբ Հոգիին կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից, ամէն:

Ապա կրկին եկեղեցւոյ Դասը կու գան: Քահանան խորան կը հանէ նորրճան, ըսելով.

ՍԱՂՄՈՍ 43

Արդարութիւն ըրէ ինձի, ո՛վ Աստուած,
անհաւատ մարդոց դէմ իրաւունքս պաշտպանէ՛,
եւ փրկէ՛ զիս նենգաւոր ու անիրաւ մարդոցմէ:
Դուն ես նեցուկս, ո՛վ Աստուած,
ինչո՞ւ համար զիս կ'անտեսես,՝
ինչո՞ւ համար տրտում ըլլամ,
երբ թշնամին կը նեղէ զիս:
Քու լոյսդ եւ ճշմարտութիւնդ դրկէ,
որպէսզի զիս առաջնորդեն եւ բերեն
քու սուրբ լեռդ, տաճարդ՝ ուր կը բնակիս:
Հոն՝ սեղանիդ քով պիտի գամ, ո՛վ Աստուած,
դուն՝ իմ ուրախութիւնս եւ ցնծութիւնս,
եւ քնարով պիտի գովերգեմ քեզ, ո՛վ Աստուած,
իմ Աստուածս:
Հետեւաբար ինչո՞ւ տխրիմ, եւ կամ ինչո՞ւ խռովիմ.
Աստուծո՛յ պիտի յուսամ, եւ վերստին գովերգեմ զայն, ըսելով.
«Փրկի՛չս ես դուն, իմ Աստուածս ես»:

Ապա խոնարհելով կ'ըստ.

ԵՐԿՊԱԳՈՒԹԻՒՆ

[Այսինչ] անունով Քրիստոսի այս ծառան, երախայութենէ մկրտութեան եւ մկրտութենէն երկրպագութեան գալով՝ կ'երկրպագէ այս սուրբ Սեղանին, կ'երկրպագէ այս

սուրբ Խորանին, կերկրապագէ սուրբ Աւագանին, որովհետեւ մեղքերը հանեց իր վրայէն եւ աստուածգիտութեան լոյսը հազաւ:

Ապա նորընծան Կնքահօր կու տայ եւ Քրիստոսի սուրբ Մարմինով եւ Արիւնով կը հաղորդէ երեխան, որմէ ետք Կնքահայրը նորընծան մօրը կը յանձնէ:

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՇԱՐԱԿԱՆ ԳՁ.

Նոր Սիոն ծընեալ մանկանք սո՛ւրբ սո՛ւս՛ գրնաւն. շորհազարդեալք Հօգաւիւ Աստուծօր. օրհնեցէք զՀայրն երկնասօր յասօր ծընդեան Սը՛րբուհո՛յ Կոստին. յոր օ՛րհնեցայք յա՛նձի՛ ց՛նախնա՛ յն:

Սուրբ Աւագանէն ծնած Նոր Սիոնի զաւակները, որ Աստուծոյ Հոգիին շնորհքներովը զարդարուած էք. սուրբ Կոյսի ծնունդին այս օրը երկնասօր Հայրը օրհնեցէք, որովհետեւ Աստուածածնին միջոցաւ էր որ նախասօր տրուած անէծքը շեզի համար օրհնութեան փոխուեցաւ:

ԱՂՈԹՔ

Փա՛ռք քեզի, յաիտենական թագաւոր, որ քու Եկեղեցիդ կ'աճեցնես եւ կը լեցնես այն լուսաւոր հասարակութիւնը որ ունիմք մենք՝ անհամար թիւով փրկուածներս, որ քու Քրիստոսիդ ճշմարիտ աստուածութիւնը ճանչցանք: Փա՛ռք քեզի, որ մեզ արժանի ըրիր երկրորդ ծնունդով մը որդեգիր դառնալու քեզի՝ երկնասօր Հօրդ, եւ հաղորդեցիր Միածինիդ մարմինով եւ արիւնով:

Եւ հիմա, ո՛վ Տէր, Սուրբ Հոգիիդ պարգեւած սրբութեամբ պահէ այս երեխան, որպէսզի անարատ մնալով՝ քու կամքդ կատարէ եւ անմեղութեամբ հասնի յաիտենական կեանքիդ: Ուղղէ՛ եւ քու երկիւղիդ մէջ հաստատէ իր քայլերը. քու լուսաւոր պատուիրաններուդ հնազանդութեան մէջ պահէ զայն, եւ իր ամբողջ կեանքի ընթացքին պահէ խաղաղ եւ առանց մեղքի, մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովն ու մարդասիրութեամբը. որուն հետ կ'օրհնենք քեզ, Հայր ամենակալ, կենդանարար Սուրբ Հոգիիդ հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

Ապա կ'ըսէ Տէրունական աղօթքը.

Կ'օրնենք մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր երկնասօր, սրբաբանուի՛ անունդ: Թող գա՛յ արքայութիւնդ: Թող կատարուի՛ քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր՝ եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ Չարէն ազատէ՛: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն: